



Հակոբ Պարոնյան

Պտոյտ մը Պօլսոյ թաղերու մէջ

Ջ, Է, Ը

Ջ.

ԷՅՈՒՊ

Էյուպի մէջ երկու սուրբ կայ, որ իրարմէ կէս ժամու չափ հեռաւորութիւն ունին: Այս սուրբերէն միոյն անունն է Աստուածածին եւ միւսինը Եղիա: Այսօր Ս. Եղիայի Էյուպի վրայ պիտի խօսինք :

Այս թաղին մէջ բնաւ սատանայ չկայ, գրեթէ մեծ մասամբ աղանիի պէս միամիտ են: Ժողովուրդը պահպանողական ըլլալով՝ քայլ մը յառաջ գնացած չէ այն վիճակէն, որուն մէջ ստեղծած է զինքն Աստուած: Այս թաղին մէջ պտըտողը ինքզինքն Աղանայ ժամանակակից կը կարծէ :

Հարիւր տասը հայ տուն կայ հոս: Ժամանակաւ երկու վարժարան ունէին, մին աղջիկներու եւ միւսը մանչերու. իսկ հիմա այդ շէնքերն այրած ըլլալով՝ աշակերտներու մէկ մասը տան մը մէջ կը խաղան եւ մէկ մասն ալ փողոցներու մէջ: Աշխատող պզտիկ մաս մը կայ, որ հանգանակութեամբ վերաշինել կաշխատի թաղին վարժարանները :

Ժողովուրդն իր գաւակներուն դաստիարակութեանը համար սիրտ չհատցուներ. եթէ Աստուած կամենայ, կըսէ, մեր գաւակներն առանց վարժարան երթալու ալ կրնան ուսումնական ըլլալ :

Հոս ո՛չ ընկերականութիւն կայ եւ ո՛չ երիտասարդութիւն, այլ առանձնասիրութիւն եւ տղա յութիւն կայ. ամեն մարդ պարտաւոր է իւր տունը քաշուիլ ու նստիլ. մեծ անհրաւորութիւն է դրացոյն տունն երթալ եւ մէկ երկու ժամ նստելով ժամանակ անցունելը :

Այս թաղին մէջ արհեստն ալ իւր օրօրոցին մէջ է դեռ: Էյուպի ազգայիններուն մէկ մասը բրուտ ըլլալով՝ հողէ տեսակ-տեսակ ամաններ եւ անօթներ կը շինեն: Հողէ տեսակ մ՝ ալ անօթ կը շինեն, որուն հայերէնը չենք յիշեր, բայց մեր ընթերցողներուն կատարեալ գաղափար մը տալու համար յիշեալ անօթին վրայ՝ կը պարտաւորինք ըսել, թէ շատ մը կիներ հիմայ ճիշտ այդ հողէ անօթը յարդէ շինելով՝ վրան լաթ մը կ՝ անցունեն եւ քիչ մը ծաղիկով եւ քօրտէլայով գարդարելէն ետքը իրենց գլուխը կ՝ անցունեն :

Այս թաղին մէջ գինետուն չկայ եւ օղի ծախուիլը արգելուած է ... Ի՛նչ դժբախտութիւն: Թաղեցին երեկոները ընդհանրապէս Իլիմօն Իսկէլէսի կը հանդիպի եւ հոն քանի մը գաւաթ օղի խմելէն ետքը կ՝ երթայ իւր թաղը՝ ուր տան մը մէջ ալ գաղտնի օղի կը ծախուի: Շատ մը ընտանիքներ իրենց գաւակներն օղիէ կտրելու համար այս թաղը կու գան, ինչպէս որ տենդ ունեցողներն ալ հիմա Միջագիւղ կ՝ երթան՝ շուր խմելէ կտրուելու համար :

Ժողովուրդն եկեղեցասէր է, սակայն քարոզիչ չուզեր. եթէ տարին մէկ-երկու անգամ Պատրիարքարանէ քարոզիչ մը դրկուի հոն՝ թաղեցին սիրով կ՝ ընդունի գայն այն պայմանաւ, որ քարոզը տալուն պէս թաղէն դուրս ելնէ :

Կիները մեզի պէս ժրաջան են, վայրկեան մը պարապ չեն նստիր, Էնթարի, շալվար հագած՝ ֆէսհանէ ի համար ֆէս կը հիւսեն, նստած իրենց տանը դրան սենին վրայ, որու առջեւէն կ'անցնի թաղին կոյանոցը: Թաղին աշխատատարներէ գոնէ հանգանակութիւն մ'ալ բանային եւ անոր արդիւնքովն մաքրէին սոյն կոյանոցն, որուն մէջ երբեմն կ'իյնան լամպիքա շատկէկ խմողները. իսկ եթէ թաղեցոյն քիթը շահ մ՝ ունի այդ կոյանոցին հոտէն՝ ասոր ըսելիք չունինք :

Կիները լայնածաւալ սիրտ մ՝ ունին, եւ այս պատճառաւ երկարակեաց են. ամենէն կարճ կեանք ունեցող կինն իննսունըինը տարեկան է, եւ երբ հարիւր տարեկան կին մը մեռնի՝ ծաղիկ հասակին մէջ առ Աստուած փոխուած կը

համարուի, իսկ երբ մէկ տարեկան աղջիկ մը մեռնի՝ վիժած կը սեպուի :

Իգական սեռին մէջ փոքրիկ մաս մը կայ, որուն հետ խօսելու համար գրահ հագնելու է, վասնզի ասոնք փայտով կը խօսին, եւ եթէ կանխաւ գգուշութիւն չընես՝ գլուխդ կը պատառեն :

Բամբասանքն հոս յուսացուածէն աւելի է, միայն թէ սահմանափակ ըլլալով՝ էնթարի շալվար ին վրայ կը դառնայ միշտ :

Թաղին բերքն է փայտէ շինուած տղու խաղալիկներ, որոնցմէ երբեմն մեծ մարդեր ալ ծախու կ' առնեն իրենց համար :

Օդը թէպէտեւ աղէկ է, բայց բնակիչներուն թնրութեանը նայելով՝ կ' երեւի որ քիչ մը թնրեցուցիչ է: Էյուպցիներէն ոմանք փողոցը քալած ժամանակնին կը քնանան եւ աղուոր երագներ կը տեսնեն :

Է.

ԳԱՏԸ ԳԻԻՂ

Աշխարհագրական հնաւանդ սովորութեան դէմ խօսած չըլլալու համար՝ պարտաւոր ենք ըսել, թէ այս գիւղն ալ ունի իր արեւելքն, արեւմուտքն, հիւսիսն եւ հարաւն. բայց մեր խիղճն ալ յարգելու համար՝ կը ստիպուինք խոստովանելու, որ արեւելքին, արեւմուտքին եւ հիւսիսին գոյութիւնն անուանական է. հարաւն է միայն, որ կտիրէ այս գեղին վրայ: Հիւսիսն իսկ եթէ երբեմն քանի մը խօսք ընել ուզէ՝ հարաւին բերնով կ'խօսի: Արեւն հոս հարաւային կողմէն կ'ելնէ եւ հարաւային կողմէ կ'մտնէ, վերջապէս ամեն բան հարաւ է հոս :

Այս տողերը գրելով մեր նպատակն է իմացունել արգոյ հասարակութեան, որ ձմեռուան եղանակին մէջ այս գիւղն երթալ փափաքողներն ամառուան հագուստ հագնելու են. իսկ ամառուան տաք օրերուն մէջ երթալ ուզողները մերկ երթալու են հոն, այսինքն տէքօլթէ հագնելու են :

Մահուսիյէ՝ ի ընկերութիւնն իր ճամբորդները զովացնելու համար է, որ այնպիսի ձեռով շոգենաւաներ կ'բանեցունէ, որոնք միշտ ծովու ալիքներ կ' ընդունին

իրենց մէջ, որով ճանբորդները ծովու ջրով կ'ուսացուին եւ կը գովանան: Եթէ այս շրջապատը՝ ճանբորդները տաքէն կ'սարէին :

Այս գիտն այնչափ օրհնեալ գիտն մ' է, որ քանի մը տարիներէ առաջ, երբ հրէային մէկը գուշակութիւն ընելով ըսաւ, թէ գետնին տակ պիտի անցնի այն գիտն, որոս անուան սկզբնատառը գ է՝ ամեն մարդ միաբերան պօտաց, թէ Գատը գիտն ըլլալու է այդ գիտը: Հրէային գուշակութիւնը չելաւ, բայց ի՛նչ օգուտ, գեղին պատիւը հրապարակի վրայ կոտորեցաւ: Այն թուականին ըսողներ ալ գտնուեցան, որ այս լուրը տարածողները մեր կեսարացի ազգայիններն էին, որոնք աժան գնով տուն վարձելու համար հնարած էին այդ լուրը: Եւ արդարեւ, տուներուն գիները հարիւրին վաթսուն իջան. շատ մը վաճառականներ իրենց առնելիքն ուզեցին գեղիս մէջ նստող վաճառականներէն. շատերը հեռացան գեղէն. իսկ մեր կեսարացի ազգայիններն իրենց նստած տեղէն չշարժուեցան, թող աժան նստինք ու գետնին տակն անցնինք, ըսելով :

Այս գեղին մէջ թէպէտեւ երեքհարիւր յիսուն տուն հայ կայ, բայց բնիկ ազգային հագիւ քսաներեք ու երեք քառորդ մարդ կայ. մնացածն այլեւայլ թաղերէ գաղթած է:

Ժամանակաւ ամայի դաշտ մ' էր այս գեղը. իսկ երբ քանի մը երոպացիներ, որոնք որսորդութիւն ընելու մոլութիւնն ունէին, այս գեղն եկան գայն որսորդութեան յարմար գտնելնուն համար՝ մեր ազգայիններէն ալ շատերը անոնց հետեւելով եկան բնակութիւն հաստատեցին հոն: Այսօր եթէ երոպացիներն հեռանան այդ գեղէն՝ մեր ազգայիններն ալ կ'թողուն գայն: Ո՞վ կրնայ պնդել, թէ մեր ազգայիններն երոպացիներու նմանիլ չեն ուզեր ... :

Այս գեղին մէջ բաց ի հարաւէն կտիրէ նաեւ ազնուապետութիւնն, որ հարաւին չափ տենդ կպատճառէ գեղին ազգային գործերուն եւ թերեւս անկէ աւելի վնասակար է :

Ամեն անգամ, որ թաղական խորհուրդ ընտրուած է՝ անդամներու մէջ անհամաձայնութիւն գոյացած է: Թաղական խորհուրդն այնքան կարծիքներէ բաղկացած է, որքան անդամներէ որ կ'ազնուած է, եւ այս շատ վնաս տուած է ազգային վարժարանին յառաջադիմութեան: Թաղական խորհրդոյ իրաքանչիւր

անդամն իրեն հաճելի եղած դրութեամբ կ' ուզէ առաջ տանիլ վարժարանը. մին ֆրանսական դրութիւնը կ'պաշտպանէ, ուրիշ մը գերմանական դրութեան վրայ կ'յարձակի, երրորդ մը անգղիական դրութիւն իբրեւ փրկարար միջոց կ'նկատէ, չորրորդ մը թրքական դրութենէն մագիւ չափ չշեղիր, հինգերորդ մը աստրիական դրութիւնը կ'փաստաբանէ, եւ կ'արժիքներուն այս անհամաձայնութեան մէջ վարժարանը կ'գոցուի, եւ բացուելու համար կ'սպասէ, որ թաղական խորհուրդն հաճի դրութիւն մը ընդունիլ: Թաղական խորհուրդն չկրնար համաձայնութիւն գոյացնել. բայց վարժարանը կ'բացուի եւ կ'սկսի կատարուիլ, օր մը գերմանական դրութեամբ, օր մը ֆրանսիական դրութեամբ, առաւօտ մը թրքական դրութեամբ եւ երեկոյ մը անգղիական դրութեամբ. այսպէս թաղականի մէջ համաձայնութիւն կ'գոյանայ եւ թաղեցին ուրախ սրտով զիրար կ'շնորհատրէ ըսելով. « Ապրին թաղական խորհրդոյ մեծապատիւ անդամներն, որ իրարու հետ համաձայնած են »: Մակայն այս վարժարանին անկանոն ընթացքը մեծ օգուտ բերաւ ազգին, ծնունդ տուաւ Պէրպէրեան վարժարանին, այժմ Իճատիէ, որ պատիւ կ'բերէ ազգին :

Գիղիս բնակիչներ շատ քաղաքավար են. իրարու սիրտ չկոտրելու համար ամենամեծ զոհողութիւններու յանձնառու կ' ըլլան :

Անցեալները ազնուապետական դասէն մէկը կ'ացինով մը վարժարանին հինը տեղէն կ'հանէր. ուրիշ մ' ալ քանի մը քայլ հեռուէն կ'դիտէր: Երբ այս վերջնոյն հարցուեցաւ, թէ ինչո՞ւ անտարբեր կ'եցած էր՝ հետեւեալ պատասխանը տուաւ.

Մտերիմ բարեկամս է, եղբա՛յր. միտքս դրի, որ երթամ երկու խօսք ընեն, բայց վերջէն մտածեցի, որ մեր բարեկամութիւնը պիտի վիրատրուի. անոր համար թող տուի, որ ուզածն ընէ :

Մաս մը կ'այ հոս, որ ազնուապետներու գործիք ըլլալով՝ այն ատեն միայն ազնուապետներու առջեւ ձայն կ'ընայ հանել՝ երբ շարքի մը երգել հարկ ըլլայ :

Մէկ մասն բոլորովին անտարբեր ազգային գործերու՝ կա՛մ ծովեզրեայ սրճարաններու մէջ նարտ կ'խաղայ եւ կ'ամ նարկիլէ կ'քաշէ :

Ուրիշ ազնուապետական մասսն՝ ալ կայ, որ միայն ուխտով կամ պէզոքով կ՛ծառայէ ազգին :

Այս գեղին եկեղեցին, որու անունն է Ս. Թագաւոր եւ ուր Ս. Աստուածածնայ օրը մեծ տօնախմբութիւն կ'ըլլայ՝ ուխտատեղի մ'է եւ ուխտաւորներէն շատ դրամ կ'ընդունի: Այս Թագաւորն ալ ուրիշ թագաւորներու պէս բաւական հասոյթ ունի, բայց զայն գործածելու կերպը չգիտեր, ելմտագէտ թաղականներ չունենալուն համար: Եթէ ուխտաւորներէն առնուած դրամներն լաւ մատակարարուէին՝ երջանիկ Ս. Թագաւոր մը կ'ունենայինք եւ իւր վարժարանն ալ միշտ բարեկարգ վիճակի մէջ կ'յարատելէր :

Այս գեղին մէջ ընդհանրապէս կ'անչնան ազգային զգացում կրելու, ինչպէս դու կ'անչնաս տունդ ջուր կրելու: Եթէ երբէք ստիպուին ասոնք օր մը ազգային զգացման պէտքը ճանաչելու՝ դարձեալ իրենք անձամբ չպիտի կրեն զայն, այլ իրենց սպասաւորներուն պիտի տան զայն, որ իրենց ետեւէն բերեն :

Բայց այս գեղին մէջ կգտնուին նաեւ այնպիսի անձեր, որոնք ազգային զգացում կկրեն :

Ասոնցմէ է Մուրատեան բարեհամբաւ գերդաստանն, որ ծանօթ է իւր ազգասիրական գործերովն:

Մեծ. Մկրտիչ Էֆէնտի Մուրատեան աղջիկներու վարժարան մը բացած է հոս 1868 -էն ի վեր եւ ամիսը 6 - 700 դահեկան ծախք ընելով՝ աղքատ աղջիկներ դաստիարակել կու տայ հոն: Ձմեռուան եղանակին մէջ աղքատներու ձրի ածուխ կբաշխէ, ինչպէս նաեւ աղքատներու ձրի բժիշկ կղրկէ եւ ձրի դեղ կու տայ: Մուրատեան եղբայրներն իրենց մօրը թաղման համար եկեղեցոյն եօթանասուն ոսկի եւ կտակի պաշտօնի համար ութսուն ոսկի, վարժարանի շինութեան համար հարիւր ոսկի նուէր ընելէն զատ՝ երկու հարիւր յիսուն ոսկի դարձեալ նուիրած են վարժարանի շինութեան համար :

Նմանապէս հոս կբնակին Մեծ. Սերովբէ Կիւլպէնկեան, Աբիկ Ունճեան եւ Շաշեան Պօղոս Էֆէնտիներն, Մովելոց Մասնաժողովոյ անդամներէն երեքն, որոնք իրենց միւս ընկերներուն հետ մինչեւ այսօր գիշեր ցերեկ աշխատելով՝

ամեն ազգասէր սրտերու մէջ անմոռաց յիշատակ մը թողած են, թէպէտ եւ մեր Ազգային Չոչերէն հնգական օրինակ առած չեն: Ասանկ աշխատող ազգասէրներ ունենալնէս ետքը՝ սովն դեռ քառասուն տարի ալ տեւէ՝ բնաւ փոյթ չենք ըներ :

Թաղիս բնակիչներն ընդհանրապէս հարուստ են եւ ընդհանրապէս մէկ ձիթապտուղը, կ'ըսեն, չորս պատառ կ'ընեն. տնտեսագիտութիւնն մինչեւ այս աստիճան յառաջ գնացած է. բայց շատ հարուստներ այս ալ շոայլութիւն համարելով՝ որոշած են սեղանի վրայ մէկ ձիթապտուղ միայն դնել :

Քանի մը հարուստներուն համար ալ արեւը սովորականէն երեք ժամ վերջը կ'ծագի, երբեմն ալ բնաւ չ'ծագիր, եւ այդ հարուստներն մինչեւ երեկոյ քնանալով՝ գիշերը կարթնանան եւ կսկսին իրենց բրէճայ ին :

Ուրիշ թաղերու հետ բաղդատմամբ՝ օղիի եւ գինիի գործածութիւնը քիչ է հոս. ընդհանրապէս գոնեաք կ'գործածուի :

Իգական սեռն գոնեաքի տեղ բամբասանք կ'գործածէ եւ առանց ջորի: Իրարու ետեւ գիրար գետինը կ'անցունեն, իսկ երբ դէմ առ դէմ գան՝ գիրար երկինք կը բարձրացունեն :

Եթէ գործ չունիս՝ եկո՛ւր սա պատուհանին առջեւ քիչ մը կայնինք ու մտիկ ընենք :

Տիկին Քաթի՛կ, օրհորդ Աղաւնին տեսա՞ր երէկ :

Բարով խէրով չտեսնէի, ատ ո՛րչափ ճերմակ քսուած էր ... գլուխն ալիւրի պարկին մէջ է խօթ եր, ի՛նչ է ըրեր :

Անանկ ալ շրջագգեստ մը հագած էր, որ չորս կողմը բաց էր :

Թերեւս քումաշ պակսած է :

Գոնէ ոտները պզտիկ ըլլային :

Այսու ամենայնի սատանան շատ գեղեցիկ է :

Գեղեցկութիւնն ալ ո՞ր է ասոր ... երեսը բնաւ տեսնել չեն ուզեր, կողող տեսնէ :

Ահա օրիորդ Աղաւնին դուռը կը գարնէ այն տան, ուր այս խօսակցութիւնը կ'ըլլայ:

Բարի եկաք, օրիորդ Աղաւնի, աս ո՞ր էք. հիմա տիկին Քաթիկին քեզի համար կը խօսէի եւ կ'ըսէի, թէ օրիորդ Աղաւնին մեզի բոլորովին մոռցաւ :

Ես ձեզի կը մոռնա՞մ, ամեն օր գալ կ'ուզեմ, բայց տան գործերը թող չեն տար: (Մեկուսի) Կողող տանի երկուքնիդ ալ:

Օրիորդ Աղաւնի, իրաւ որ ձեզի տեսնամ նէ՛ քոյրս տեսածի պէս կ'ըլլամ: (Մեկուսի) Սատանան տեսնէ երեսդ: (Բարձր) Օրիորդ Աղաւնի, ամեն օր տեսնամ նէ քեզի՛ չեն վշտանար :

Շնորհակալ եմ: (Մեկուսի) Խենթ ըլլալու էի, որ խօսքերուն հաւատայի :

Այդ շրջագգեստիդ ձեւն ո՞ւսկից առիր, Աղաւնի :

Հաւնեցա՞ք :

Շատ հաւնեցայ, օրիորդ Աղաւնի, հատ մ'ալ ես պիտի շինեմ անանկ :

Հաւնելու բան մը չէ կարծեմ :

Ի՞նչ կ'ըսես, օրիորդ Աղաւնի, շատ ձեւատր էր: Օրիորդ Աղաւնի, խահվէ՛ կ'ուզէք, անո՞ւշ կ'ուզէք, պտո՞ղ կ'ուզէք, կերակո՞ւր կ'ուզէք, գինի՞ կ'ուզէք, սիկարա՞ կ'ուզէք. կաղաչեմ, օրիորդ Աղաւնի, առանց քաշուելու գրուցեցէ՛ք :

Բան մ'ալ չեն ուզեր, ձեր ողջութիւն կ'ուզեմ :

Անուշ մը հրամանեցէք :

Շատ լաւ, կ'ընդունիմ :

Քեզի բան մը պիտի հարցնեմ, բայց շիտակ պիտի գրուցես, վասնզի շաբաթ մը կայ որ տուներուս մէջ կոհիւր պակաս չէ. տիկին Թէրեզային առջեւի ակոսները շինծու չե՞ն մի :

Ետեւիներն ալ շինծու են :

Ողջ ըլլաս, ես կ'ըսեմ նէ՛ ինծի չեն հաւատար ... անուշ մ'ալ կիրամնէ՞ք, օրիորդ Աղանի:

Չէ, շնորհակալ եմ :

Բան մ'ալ պիտի հարցունեմ, բայց կը քաշուիմ կոր ... :

Մի՛ քաշուիք :

Տիկին Մարթային գիրութիւնը բնակա՞ն է թէ բամպակ թխած է:

Տիկին Անթառամին ըսածին նայիս նէ՛ բամպակ է, իսկ տիկին Շուշանին խօսքին հաւատանք նէ՛ բուրդ կը թխմէ եղեր :

Շնորհակալ եմ, օրիորդ Աղանի, մեզի մեծ հոգէ մը ազատեցիր. չգիտես քանի մը օրէ ի վեր ո՛րչափ անհանգիստ էի ... օրիորդ Աղանիին կերակուր բերէք :

Օրիորդ Աղանին մնաք բարով կ'ըսէ եւ կը մեկնի մոմռալով. « ասոնք ալ միշտ ուրիշները վար գարնելու խօսքեր կ'ընեն »:

Իգական սեռի մէջ կայ ընտիր մաս մը, որ երբեմն ազգային խնդիրներու վրայ կ'խօսի. կայ մաս մ'ալ, որ Ազգանուէր-Հայուհեաց ընկերութեան մէկ ճիւղը կկազմէ այս գեղին մէջ եւ որ մեծ գործեր տեսնելու պատրաստուած է:

Նորածնութիւնը տեսակ մը ախտ եղած է հոս. գեղեցիկ սեռը շատ անգամ դիտակով Մարսիլիայի շոգենաւին կը նայի, որ վերջին ձեւն ամենէն առաջ իր վրայ երեւի :

Գեղիս գբօսավայրն է Մօտա պուռնու ըսուած տեղն, որ ծովու վրայ կնայի. բայց հոն գացողները ծովին չեն նայիր, այլ գեղեցիկ սեռին, որ անշուշտ ծովէն ատլի

գուարճութիւն կը պատճառէ :

Գեղիս բերքն է առաջին կարգի տենդ. աղքատները տենդին երրորդ տեսակէն կրնան առնել. առաջին տեսակը հարուստներու համար պահուած է եւ շատ սուղ կժախտի :

Ջարմանալի է սակայն, որ բժիշկներն երբեմն հիւանդներ կղրկեն հոս՝ օդափոխութեան համար :

Օդին վիճակը խեղճ է. Իսկիտարը թող չտար, որ հիւսիս մտնէ հոն եւ բարեկարգութիւն մտցունէ օդին մէջ :

Ը.

ԲՈՒՄԷԼԻ ԶԻՍԱՐ

Հրամանցէք, աղա՛, պատուական սքաբոց, աժան պիտի տամ :

Մի՛ քաշեր, եղբայր, թո՛ղ տուր օձիքս :

Պատուական սքաբոց, աղա, օղիի հետ աղէկ կ՛ երթայ :

Թո՛ղ տուր, պէտք չունիմ :

Ինձի նայէ դուն, աղա՛, եկուր քեզի աղուոր քէֆալ տամ, անոնց մի՛ նայիր դուն ...

Ձուկ առնելու համար չեկայ հոս, եղբայրներ :

Ասդին եկուր, բարեկա՛ն, անոնք խարդախ մարդեր են ... օխա մը ձուկ ունիմ պահած, քեզի տամ, օղիին վրայ շատ աղէկ կ՛ ուտուի. այս առտու բռնեցի, բարեկամի տրուելու բան է ...

Չեմ ուզեր :

Եկուր քեզի օղի մը հրամցունեմ :

Շնորհակալ եմ, ես թաղը պատելու համար եկայ եւ ոչ թէ օղի խմելու համար :

Այս գեղին մէջ օղի կխմուի, բարեկամ, եւ առանց օղի խմելու պտտիլն անկարելի է հոս :

Սովորութիւն չունիմ :

Գոնէ սա ձուկէն առ, աժան պիտի տամ :

Չեմ ուզեր :

Ի՞նչ կ' ուզէք մարդէն, անպիտաններ, թող տուէք, որ գործին երթայ, ինչո՞ւ օճիքին փակեր էք :

Ձեր մարդասիրութենէն շնորհակալ եմ :

Ասոնք անանկ մարդիկ են, որ նաւամատոյցին վրայ մէկը տեսնելուն պէս չորս կողմէն կը պաշարեն :

Այո՛ :

Եւ կ' ուզեն, որ բռնի ձուկ առնել տան քեզի :

Ճիշտ է :

Քանի անգամ ըսած եմ իրենց, որ այս բնատրութիւննին փոխեն :

Շատ բարի մարդ էք: Մնաք բարով, թաղը քիչ մը պիտի պտտիմ :

Հազար անգամ պատուիրեցի իրենց, որ գեղը եկողներն մի ձանձրացունէք, բայց որո՞ւ կ' ըսես :

Շնորհակալ եմ, մնաք բարով :

Ասոնք անանկ մարդիկ են, որ գլուխնուն դրածը կ' ընեն :

Շնորհակալ եմ :

Գեղին վարժարանին համար քանի մը դուրուշ նուէր կու տա՞ք, աղա. ծառադ իմ վրաս առած եմ դպրոցին տնօրէնութիւնն եւ կը կառավարեմ :

Թաղեցին ի՞նչ կ'ընէ :

Թաղեցին ձուկ կբռնէ :

Դպրոցն եկամուտ ունի՞ :

Ոչ, դպրոցը եկամուտ չունի, եւ առանց եկամտի ալ շատ աղէկ կառավարուելու վրայ է ... փառք Աստուծոյ, մենք եկամտի պէտք չունինք :

Առանց դրամի ի՞նչպէս կկառավարուի :

Վարժապետներու ամսական չեմ տար :

Լա՛ւ :

Տնտեսի ալ ամսական չեմ տար :

Շատ աղէկ :

Թողթի, գրիչի եւ մելանի ալ ստակ չեմ տար :

Կեցցե՛ս :

Փայտի ածուխի համար ալ բան մը չեմ վճարեր :

Սքանչելի՛ ... գոնէ բոլոր վարժարաններու տնօրէնութիւնը դուն առնէիր վրադ :

Հիմա, հարցուր ինձ, թէ ի՞նչպէս կը կառավարես :

Հարցուցի :

Հարցուցի ըսելով չըլլար, հարցո՛ւր :

Շատ աղէկ, ի՞նչպէս կկառավարես :

Ռոպերթեան վարժարանի հայ ուսանողներէն մէկ քանին կու գան ձրիաբար դաս կու տան. է՛յ, ըսէ :

Է՛յ :

Տնտեսի համար պէտք չունիմ. աշակերտներն իրենց ուտելիքն ու խմելիքն իրենք կրերեն. է՛յ, ըսէ :

Է՛յ:

Թողթը գրիչը եւ մելանը ասդիէն անդիէն կմորսամ. է՛յ, ըսէ :

Է՛յ :

Փայտի, ածուխի պէտք չունիմ, վասնզի մեր աշակերտները մրսելու սովորութիւն չունին: Ահա այսպէս կկատարեն դպրոցը, բայց դարձեալ կբամբասուիմ :

Ի՞նչ ըսելով կբամբասեն :

Կ՛ ըսեն թէ երբեմն քանի մը ընկերներուս հետ վերը այգին կելնեմ օղի խմելու եւ դպրոցին աշակերտներուն խաղ կանչել կու տամ: Կ՛ ըսեն թէ ձկնորսներու օղի խմցունելով գանոնք շահած եմ եւ գեղին մէջ հասարակաց կարծիքը խղղած եմ: Անցեալները վարժուիի մը խնդիր ծագեցաւ. ես կ՛ ուզէի որ վարժուիին ելնէ. գեղին բոլոր ձկնորսներն ժողովքի եկան եւ միաբերան պօռացին վարժուիին չենք ուզեր : Քանի մը լուսատրեալներ սկսան հարցնել, թէ վարժուիուն ինչո՞ւ չէք ուզեր, եթէ յանցանք ունի՝ ըսէք յանցանքն եւ ան ատեն մենք ալ ձեզի հետ կ՛ ըլլանք եւ չենք ուզեր: Ձկնորսները, որ բարի մարդիկ են՝ նորէն պօռացին :

Չենք ուզեր :

Ինչո՞ւ չէք ուզեր :

Մենք ի՞նչ գիտնանք. Բառնիկ աղային հարցուցէք:

Բայց վարժուիին յանցանք չունի :

Յանցանք չունենալուն համար չենք ուզեր, ըսին եւ վէճը գոցուեցաւ. եթէ չգոցուէր՝ ձկնորսներն աղէկ մը պիտի ծեծէին այդ լուսաւորեալները:

Վարժարանն հիմա ի՞նչ վիճակի մէջ է :

Աղէկ է. ես ուրիշ գործ չունիմ, առաւօտէ մինչեւ երեկոյ դպրոցի համար կաշխատիմ. ուզած ժամանակս ալ ազգային հանդէս ըսելով՝ լրագիրներու մէջ ծանուցում կ'ընեմ, հանդէս մը կու տամ, քանի մը հարիւր դահեկան ալ անկէ կփրցունեմ:

Ի՞նչ բանի հանդէս է այն: Սահմանադրութեան տարեդարձի՞ հանդէս է, եկեղեցոյն տօնախմբութեա՞ն հանդէս, թէ վարժարանին ... :

Իրաւ որ կարեւորութիւն տուած չեմ անուն մը դնելու համար. եկո՛ւ տես, որ հարցնող փնտռո՛ղ ալ չկայ, բայց գալ տարի անուն մը պիտի դնեմ :

Քանի՞ տուն հայ կայ :

Ամառը ութսուն տուն է, աշունը եօթանասունըհինգ, ձմեռը վաթսուն եւ գարունը վաթսունըհինգ :

Թաղեցիին արեւստն ի՞նչ է :

Թաղեցիին մէկ մասը նաւավար է եւ մէկ մասը ձկնորս: Ամենքն ալ մաքուր սիրտ կկրեն եւ մաքուր օղի կխմեն, բայց այնչափ առողջ են, որ սովորական խօսակցութեան մը մէջ անգամ իրենց ձայնը Թարապեայէն կը լսուի: Հաստանդամ մարդիկ են, շատ կապրին. անուշ-անուշ հայիոյել մը ունին :

Ողջ ըլլան: Կիներն ի՞նչպէս կեանք կ'անցունեն :

Եագմա կշինեն, կծախեն եւ Էրիկնին կնային: Ուրիշ թաղերու մէջ՝ գործը կարգին դնողն միայն կկարգուի, որ կարենայ իւր կինը ապրեցունել. հոս հակառակն է. ապրուստը ճարել չկրցողը կկարգուի, որ կինը զինքը նայի: Հոս պճնասիրութիւն, բամբասանք, շռայլութիւն, թատրոններ, զբօսարաններ չկան. հոս կեանքն անմեղ է :

Մեծապէս շնորհակալ եմ տուած տեղեկութիւններէդ :

Օդը շատ քաջատոյճ է. եթէ առջի իրիկուրնէ երկու օխա օդի խմես՝ առտուն անանկ թեթեւ կ'արթնաս, որ կկարծես թէ առջի գիշերը բան մը խմած չես. շատերը հոս կու գան օդի խմելու :

Շնորհակալ եմ :

Եթէ վարժարանին համար նուէր մը ընես՝ ես ալ շնորհակալ կ'ըլլամ :

Եկո՛ւր սա ձուկը մի՛ փախցուներ, աղա :

Սա ստաբօզն առ ու օդիի մէզէ ըրէ, տղա՛ս :

Սա քէֆալը շառնե՞ս :

Պէտք չունիմ, ըսի եւ ինքզինքս նաւակի մը մէջ նետեցի: